Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 61

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բաղալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. «Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 28.11.2025թ. N 161-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. «Գումար տրամադրելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 29.09.2025թ. N 118-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. «Աշտարակի կանաչապատում և բարեկարգում» համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. «Աշտարակի լուսավորություն» համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության «Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Է. Փարվանյան/

10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Աշտարակ համայնքի Օշական, Սասունիկ, Փարպի և Սաղմոսավան բնակավայրերում փողոցների և փակուղիների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների և ձկնաբուծական արհեստական լճակի կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Տ. Գալստյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 2</u> - Աշտարակ համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում մակերեսի ավելացում նախատեսող փոփոխություններ կատարելու դեպքում, նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքը կիրառվում է միայն գերազանցող մասով և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Աշտարակ համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

2.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Աշտարակ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների 2026 թվականի ընթացքում մեկ անգամ և մինչև 3 ամիս ժամկետով երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Աշտարակ համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

3. 2026 թվականի համար սահմանել արտոնություն Աշտարակ համայնքում ասֆալտապատում կատարելու շինարարական բոլոր աշխատանքների համար (այդ թվում՝ կառուցման ավարտն ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար)՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *«Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 28.11.2025թ. N 161-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի ավագանու 28.11.2025թ. N 161-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Աշտարակ համայնքի կարիքների համար Փարպի բնակավայրի կամրջի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգը համարել անհետաձգելի պահանջ և թույլատրել իրականացնելու մեկ անձից գնման ընթացակարգով՝ համաձայն կից ներկայացվող նախահաշվի:»*:*

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *«Գումար տրամադրելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 29.09.2025թ. N 118-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Արագածոտն» ՋՕԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատարի 04.12.2025թ. N 460 գրությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի ավագանու 29.09.2025թ. N 118-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրում ներտնտեսային ոռոգման ցանցի վերակառուցման և Ոսկեվազ բնակավայրի ոռոգման գյուղամիջյան ներտնտեսային ցանցի աշխատանքներ կատարելու նպատակով

«Արագածոտն» ՋՕԸ-ին 7 489 000 /յոթ միլիոն չորս հարյուր ութսունինը հազար/ ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:»:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Գ. Արշակյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Անահիտ Բաբկենի Զաքարյանի 02.12.2025թ. թիվ 17422 դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին» օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Անահիտ Բաբկենի Զաքարյանին /ՀԾՀ 7511590748/ սեփականության իրավունքով պատկանող Աշտարակ համայնքի Հեքիմյան 6 հասցեի անշարժ գույքի հարկի գծով տրամադրել 34 350 ՀՀ դրամի չափով արտոնություն:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - «Աշտարակի կանաչապատում և բարեկարգում» համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյան և առաջարկեց, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, Աշտարակ համայնքի տարածքում կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել «Աշտարակի կանաչապատում և բարեկարգում» համայնքային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ): Հաստատել հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի: Հաստատել հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի: Ապահովել հիմնարկի կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի գործակալությունում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - «Աշտարակի լուսավորություն» համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, Աշտարակ համայնքի տարածքում լուսավորության աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել «Աշտարակի լուսավորություն» համայնքային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ): Հաստատել հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի: Հաստատել հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի: Ապահովել հիմնարկի կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Աշտարակի համայնքապետարանի ենթակայության «Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Ստեղծել «Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Հաստատել «Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:

Հաստատել համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

«Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով, նպատակը՝ յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

«Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրակցել մարզ Արագածոտն, Աշտարակ համայնք, գ. Ոսկեվազ, Արագածի փողոց 11 նրբանցք թիվ 1 մանկապարտեզ հասցեի անշարժ գույքը:

Ապահովել «Աշտարակ համայնքի Ոսկեհատի թիվ 21 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 9</u> - Ֆինանսական աջակցություն ստրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Էմմա Փարվանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Հասմիկ Մելքումյանի 28.11.2025թ. թիվ 17225, Աննա Ոսկանյանի 08.12.2025թ. 17662 և Անի Քյոռողլյանի 09.12.2025թ. թիվ 17772 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Միկոյան Եղբայրներ 23 տան բնակիչ Հասմիկ Սեյրանի Մելքումյանին 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով

ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Կարին բնակավայրի 9-րդ փողոցի 52 տան բնակիչ Աննա Արայի Ոսկանյանին 260 000 /երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի 5-րդ փողոց տուն 9 հասցեում բնակվող Անի Էդվարդի Քյոռողլյանին 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արա Առաքելեանի լիազորված անձ Վահե Ժունյոր Սերայտարեանի 03.12.2025թ. N 17448, Մարտին Մովսիսյանի 04.12.2025թ. N 17565, Արման Ղազարյանի 04.12.2025թ. N 17566, Կարեն Գրիգորյանի 05.12.2025թ. N 17642 և Արամայիս Ավագյանի 08.12.2025թ. N 17737 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1.Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0274-0051 ծածկագրով 1,82413հա և 02-001-0274-0052 ծածկագրով 0,1135հա հողամասերը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0274-0049 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սեփականատեր Արա Ժանի Առաքելեանին:

2. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արտակի փողոց, N 9/19 հասցեում գտնվող, 02-001-0263-0131 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 14,4քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0263-0121 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի ընդհանուր համատեղ սեփականատերեր Մարտին Լևիկի Մովսիսյանին և Գոհար Արսենի Խաչատրյանին:

3. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայր, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, N 2 հասցեում գտնվող, 02-068-0029-0012 ծածկագրով 713քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-068-0029-0013 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Արման Անդրանիկի Ղազարյանին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի 3-րդ թաղամաս, N 132/1 հասցեում գտնվող, 02-001-0326-0013 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 110,5քմ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 200 000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0326-0006 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Կարեն Ռուդիկի Գրիգորյանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոց, N 89/3 հասցեում գտնվող, 02-001-0843-0328 ծածկագրով 32,6քմ և Տիգրան Մեծի փողոց, N 89/4 հասցեում գտնվող, 02-001-0843-0327 ծածկագրով 11,9քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասերը ուղղակի վաճառքով՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0843-0135 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Արամայիս Հովհաննեսի Ավագյանին:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Աշտարակ համայնքի Օշական, Սասունիկ, Փարպի և Սաղմոսավան բնակավայրերում փողոցների և փակուղիների համարակալման մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով,

1. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Մ. Մաշտոցի փողոց 6-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Մ. Մաշտոցի փողոց, 6-րդ նրբանցք, 1-ին փակուղի:

2. Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի Այգեգործական տարածք թաղամասում գտնվող փողոցին տալ 6 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սասունիկ, Այգեգործական տարածք թաղամաս, 6-րդ փողոց:

3. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 1-ին փողոց:

4. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 2-րդ փողոց:

5. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 3-րդ փողոց:

6. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 4 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 4-րդ փողոց:

7. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 5 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 5-րդ փողոց:

8. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 6 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 6-րդ փողոց:

9. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 7 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 7-րդ փողոց:

10. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 8 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 8-րդ փողոց:

11. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 40-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 9 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 40-րդ թաղամաս, 9-րդ փողոց:

12. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 1-ին փողոց:

13. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 2-րդ փողոց:

14. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 3-րդ փողոց:

15. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 4 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 4-րդ փողոց:

16. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 5 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 5-րդ փողոց:

17. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 6 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 6-րդ փողոց:

18. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 7 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 7-րդ փողոց:

19. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 8 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 8-րդ փողոց:

20. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 9 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 9-րդ փողոց:

21. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 10 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 10-րդ փողոց:

22. Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի Արա լեռ 43-րդ թաղամասում գտնվող փողոցին տալ 11 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Սաղմոսավան, Արա լեռ 43-րդ թաղամաս, 11-րդ փողոց:

23. Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի Ագարակի խճուղուց սկիզբ առնող փակուղուն տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Փարպի բնակավայր, Ագարակի խճուղի, 2-րդ փակուղի:

24. Օշական, Սասունիկ, Փարպի և Սաղմոսավան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 12</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48, 48[1], 67-70 և 77-80 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

Համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման որոշ հողամասեր տրամադրել կառուցապատման իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի: Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի, հատուկ պահպանվող տարածքների և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 3-ի:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների և ձկնաբուծական արհեստական լճակի կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Ալվարդ Դիարյանի ներկայացուցիչ Ազատ Հովհաննիսյանի 16.10.2025թ. N 13695, Արթուր Վարդանյանի ներկայացուցիչ Արմեն Շահբազյանի 01.12.2025թ. N 17325, Ռոլանդ Հակոբյանի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանի 05.12.2025թ. N 17656, Գարեգին Գևորգյանի ներկայացուցիչ Գևորգ Միրզախանյանի 09.12.2025թ. N 17762 և «ՔՐԵՅՖԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Համբարձումյանի 10.09.2025թ. N 11878՝ արտադրական նշանակության շենք-շինությունների և ջրային օբյեկտի կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0747-0079 ծածկագրով, Ալվարդ Տիգրանի Դիարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /կորիզավոր/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման

և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

2. Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0251-0024 ծածկագրով, Արթուր Ավետիսի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,3127հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /խաղող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/:

3. Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 02-058-0314-0030 ծածկագրով, Ռոլանդ Սպարտակի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 0,3068հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես ջրային հողեր նպատակային նշանակության /ձկնաբուծարանի և օժանդակ շինությունների կառուցման համար/:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0747-0080 ծածկագրով, Գարեգին Հարությունի Գեվորգյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5927հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,1551հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/:

5. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 02-068-0421-0088 ծածկագրով, «ՔՐԵՅՖԱՐՄ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1,3502հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /ձկների և խեցեմորթների մշակման տնտեսության կառուցման համար/:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2025 թվականի դեկտեմբերի 17-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ